

ԱՐԺ. Տ. ՅՈՎԷԼ ՔՇՆՅ. ՕՀԱՆԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՇ
ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ ՕԳԼԸՆՏԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այսու գոհունակութեամբ կը հաղորդենք Թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծիսական Խորհուրդներուն, Թեմական Պատգամաւորներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, յարակից կապակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ Վենթուրա Գաւառի՝ Գամբրիօ, Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, Արժ. Տ. Յովէլ Քինյ. Օհանեան, որ 2007 թուի Հոկտեմբեր 14էն ի վեր գնահատելի եւ նուիրեալ ծառայութեամբ կապակերպած էր նորահաստար այս Ծուխը, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեանի կողմէ Հոգեւոր Հովիւը նշանակուեցաւ Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցւոյ: Տէր Հայրը իր պաշտօնը պիտի ստանձնէ 2009 Յուլիս 1ին: Ուրախ ենք յայտնելու, թէ Երէցկին Անահիտը օժտուած է երաժշտական կարողութիւններով եւ Եկեղեցւոյ Դպրաց Դասի ղեկավարն էր:

Առ ի գիտութիւն, մինչեւ Տէր Յովէլին պաշտօնի ստանձնումը, Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Մարակարարն է Բրշ. Մարթին Սրկ. Զաքարեան: Իսկ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Մետրոպ Աւագ Քինյ. Սարաֆեանի Յունուար ամսուան մէջ վախճանումէն ետք, Սրբազան Հօր կողմէ Ծուխի վարչական եւ ծիսական պարտականութիւններուն պաստասխանաբուն է Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Հիւսիսային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան: Իսկ Կիրակի օրերուն Պատարագիչն է Արժ. Տ. Գէորգ Աւագ Քինյ. Առաքելեան:

Տէր Յովէլի Օգլընտ փոխադրութենէն ետք, Յուլիսէն սկսեալ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ ժամանակաւոր կերպով Վենթուրա Գաւառի եւ Սանթա Պարպարայի Հայց. Եկեղեցւոյ Պատարագիչն ու քարոզիչը նշանակուած է Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճար Ծ. Վրդ. Եարրըմեան:

Կը շնորհաւորենք Արժ. Տ. Յովէլ Քինյ. Օհանեանի նոր պաշտօնը եւ յարատեւ յաջողութիւն կը մաղթենք իրեն:

ՀԱԿԻՐՃ ԿԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԺ. Տ. ՅՈՎԷԼ ՔՇՆՅ. ՕՀԱՆԵԱՆԻ

Արժ. Տ. Յովէլ Քինյ. Օհանեան, աւազանի անունով Արտակ, ծնած է 1978 թուի Մայիս 28ին, Հայաստանի Հանրապետութեան Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին մէջ:

1985ին ընդունուած է տեղւոյն «Նորայր Միսակեան»ի անուան թիւ 5 միջնակարգ դպրոցէն ներս եւ աւարտած է 1995ին:

1996ին ծառայութեան համար մեկնած է Հայաստանի «Զինուած Ուժեր»: Երկու տարի վիւնուորական ծառայութիւնը անցուցած է Տաուշի մարզի Իջեւանի շրջանի սահմանամերձի գօտիին մէջ: 1999ին ընդունուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանէն ներս եւ վեցամեայ ուսումը աւարտած է 2005 թուականին:

2004ի Դեկտեմբեր 25ին Սուրբ Արեւիանոս Նախավկայի տօնին Սարկաւագութեան ասպիճան ստացած է ձեռամբ Գերշ. Տ. Եպրաս Եպս. Ներսիսեանի: Ուսումը աւարտելէն ետք, որպէս վերակացու ծառայած է Գէորգեան Հոգեւոր Ճեմարանէն ներս: Ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ որպէս գործավար-քարտուղարի պաշտօնով իր ծառայութիւնը բերած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատուական համակարգի օտար լեզուի բաժնին մէջ:

2005ի Մարտ 14ին պաշտպանած է իր աւարտաճառը՝ «Կրօնա-եկեղեցական բառապաշարը իմաստային դասակարգին մէջ (Եկեղեցական գիրքերու անուանումներ)» խորագրով եւ արժանացած է քաջալու գնահատականի:

2007ի Ապրիլ 15ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ ձեռամբ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեանի արժանացած է քահանայական ձեռնադրութեան եւ օժման:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինութեամբ եւ Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, 2007 թուի Յունիսի 1էն սկսեալ ծառայութեան կանչուած է Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմէն ներս:

Արժ. Տ. Յովել Քհնյ. Օհանեան եւ Երէցկին Անահիտ Բախտաւորուած են մանչ զաւակով մը,
որ անուանած են Վազգէն եւ դուստրով մը՝ Նարէ անունով: